ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 06

23 օգոստոսի 2024 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 03 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը և Հրայր Ասատրյանը :

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված «**Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին**» նախագիծը՝ Խոյ համայնքի 2024 թվականի օգոստոսի 26-ի ավագանու հերթական նիստում :

Նիստում քննարկվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի «Մշակույթի և սպորտի կենտրոն» ՀՈԱԿ-ի Ծաղկալանջ և Հայթաղ բնակավայրերում գործող Մուայթայի խմբերի մարզիկներ ՝ Գևորգ Սիմոնյանին և Վաչիկ Միքայելյանին ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցը՝ 2024 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 20-ը Թաիլանդի մայրաքաղաք Բանգկոկում անցկացվելիք պատանիների աշխարհի առաջնությանը մասնակցելու համար:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի **Խոյ համայնքի ավագանու** ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1.Տալ համաձայնություն՝ Ծաղկալանջ և Հայթաղ բնակավայրերում գործող Մուայթայի խմբերի մարզիկներ ՝ Գևորգ Սիմոնյանին և Վաչիկ Միքայելյանին 2024 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 20-ը Թաիլանդի մայրաքաղաք Բանգկոկում անցկացվելիք պատանիների աշխարհի առաջնությանը մասնակցելու համար տրամադրել յուրաքանչյուրին 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն :

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ